

Նական ազգերը չի կարելի միացնել օսմանեան կամ թուրք տարրի հետ։ Սոքա ունին իրենց անցեալը, քաղաքակըրք թութիւնը, լեզուն, որ ոչնչացնել կարելի չէ։ Նոյն իսկ միջազգային բնաւորութիւն է ստացել եւրոպական ոլեւ տութիւնների ձեռքով նրանց ինքնավարութեան հարցերը։ Արևելեան խնդիրը լուծուել կարող է, եթիւ այս վերջին հանգամանքները ի նկատի առնուին։ Ընդհանուր քարեւ փոխութիւն ամբողջ պետութեան մէջ և ազգային ինքնաւ վարութիւն այլասեռ, ոչ թուրք տարրերի համար, ահա արևելեան հարցի լուծման ուղիղ ճանապարհը ըստ հեղինակի։

Միանգամայն համաձայն ենք հեղինակի այս վերջին մտքերի հետ։ Գրքոյիկը հրատարակուած է յուլիսի 11-ի յեղափոխութիւնից առաջ, հեղինակն ամեննեին չի նախատեսում երիտասարդ թուրքերի կատարելիք դուծը։ Նոյն իսկ արհամարհանքով է խօսում նրանց զօրութեան և գործնական հետեւանքների մասին։ Բայց այս կէտը չի նոեմացնում հեղինակի գլխաւոր մտքերը, որ ի նկատի պիտի ունենան երիտասարդ թուրքերը, եթէ Օսմանեան պետութեան մէջ խաղաղութիւն և այլասեռ տարրերի համերաշխութիւն հաստատել են կամենում։

Դ.

Փութեան օնախը կամ Օրմանեանի պատրիարքութիւնը. գրեց Ա. Գրիգորեան, Պուրոն, 1908.

ՈՅՆ Ա. Գրիգորեան՝ նախ Ամերիկայում հրատարակուող «Ազգ» լրագրի մէջ և ապա առանձին գրքով 11 գլխի մէջ հոլովել է փողոցային անպատկառութեամբ հայոց լեզուի բոլոր հայհոյական բառերն ու ոճերը Ա. Օրմանեանցի գէմ, նորան վարկաբեկ անելու և կաթուղիկոսութեան համար նորա անձնաւորութիւնը ընասակար ցոյց տալու նպատակով։ «Զանգակը» № 36, որի թշնամական յարաբերութիւնը դէպի նախակին պատրիարքը յայտնի է ամենքին, ահա ինչպէս է ընորոշում այդ գիրքը իւր աշխատակից Ն. Ա. ի ձեռքով։ «Նրա (Օրմանեանի) ա-

մենաօլսերիմ թշնամին անդամ՝ հաղիւ կարողանայ առանց զզուանքի կարդալ այն անպատկառ գրութիւնը, որ «Փըտութեան օճախ» է կոչւում։ Եւ յիրաւի սա մի գրքոյէ է, որ միայն անպատութիւն կարող է բերել մամուլին և գրականութեան։ Առաջին երեսից մինչև վերջինը անամօթ գրչակի խծրծանք է և հայհոյանքի կոյտ Ա. Օրմանեանցի դէմ, և զուր կորոնէք փաստեր իւր հայհոյանքների մողայիկների մէջ արծարծած զբարտութիւնները հաստատող։ Ավանս մամուլի ազատութիւն, որ սրիկայական հակում ունեցող անխիղն մարդկանց միջոց է տալիս իրենց մտքի և հոգու ապականութիւնները ուրիշին հրամցնելու։ Մենք խնայում ենք ընթերցողների ճաշակն ու զգացումը նմուշներ բերելու այդ պասկվիլային աղտօտութիւնից։ Բովանդակութեան կեզտը զարդարուած է և ծաղրանկարներով։ Զգուանք և նողկանք կարող ենք միայն արտայայտել մամուլի և գրականութեան այսպիսի երեւոյթների դէմ։

Գ.

Ճանապարհորդական տպաւորութիւնը և համառօտնկարագիր դէպքերի վերջին կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ. գրեց Սուբիս եպիսկոպոս Պարգեանց 1985 թուականին. Երևան, 1907. 145 երես. գինն է 60 կոպէկ։

Դերապատիւ Տ. Սուբիս արքեպիսկոպոսը մեր միաբանութեան նշանաւոր անդամներից մէկն է, որ էական դեր է կատարել անցեալ գալու եօթանասնական թուականների ոկրզբեց մինչև այժմ։ Նորա ուսուցչական գործունէութիւնը, ընդհարումը հանգուցեալ Գէորգ Գ. կաթուղիկոսի հետ, գպրոցական խնդրել առթիւ նրա աւղեկորութիւնը Ս. Պետերբուրգ, խաղացած դերը 1884 և 1885 թ. թ. կատարուած կաթուղիկոսական ընտրութիւնների ժամանակ, աքսորները գէպի Ռուսաստան հանգուցեալ Երեմիա Եպիսկոպոսի տեղապահութեան և ապա Եկեղեցական կալուածների գրաւման ժամանակ, Երկարաւատե հովուութիւնը երբեք Ալեքսանդրապոլի և ն. Նախիջեանի վոխանութ և Աստրախանի ու Երևանի առաջնորդ գլխաւոր